



## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվական, N 35\_L

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ «ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ»  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆՈՒՄԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով ու «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Արտաքին կապերի բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը:

2. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին լուծարման և աշխատակիցների ծանուցման գործընթացներն իրականացնել՝ ՀՀ օրենսդրության, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատակիցներին ծանուցման ժամկետի ավարտման հաջորդ օրը:

**Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝**

**Ս. Պապիկյան**

2022 թ. դեկտեմբեր «28»

Երևան